

ՖՈՒԴՆԻԿՈՎ



ՊԵՏԵՐԱՏ

681.4 | 1642
P-91 | 1938/14048.
різьбленій з бронзи
7 квітня 1938 | 12

681-4
F-91


Տ. ԲՈՒԴՆԻԿՈՎ

Digitized by srujanika@gmail.com

ԵՐԱՎԵՐԾ
ՀԵՌԱԴԻՏԱԿ
ՅԵՎԱՄԱԴԻՏԱԿ

2491

A 19760



ՊԵՏՀՐԱՆ

1938

ՅԵՐԵՎԱՆ

Ավելի քան յերեք հարյուր տարի սրանից առաջ հռչակավոր դիտնական ֆալիեյը մի դիտակ շինեց։ Այդ առաջին դիտակն այն ժամանակվա համար շատ ցանցուցիչ գյուտ եր

Այդ մասին հաղորդելով՝ Գալիեյն այդ գյուտն անվանում ե «մեծ» և «գարերից ի վեր չլսված»։ Իսկ հիմա դիտակն ամենքին լավ հայտնի յերինով (յերկուդ դիտակ) անունով։ Բինոկլը — զա Գալիեյի յերկպատկած խողովակն ե.

Յեթե բինոկլի միջով նայելու վիճենք վորմե հեռավոր առարկայի, որինակ՝ մի ծառի, այնպես կթվա, թե անհամեմատ մոտեցավ այն։ Հիմա նրա կեղեսի վրա կարելի յե նկատել արդեն ճեղքեր, իսկ սոսկ աչքով դրանք չեյին յերեսում։ Ուստի ասում են, թե բինոկլը «մոտեցնում» կամ «մեծացնում» և առարկաները։

Շատ մանր առարկաները դիտում են խոշորացնող ապակու կամ ժխոշորացույցին միջով։ Ահա սողում և մի մանրիկ ժժմակ (պսափիկ միջատ)։ Նա հազիվ ե յերեսում։ Բայց նայեցնք նրան խոշորացույցի միջով—կտեսնեք մազմզոտ թաթիկները, փոքրիկ ընչացքները և զլիի վրայի աչիկները։


Իսկ ապակիներն ինչո՞ւ յեն «մեծացնում» առարկան։

Ի նկարում ցույց են տրված յերկու միխատեսակ հեռազբանուներ, մարդու աչքից մեկը հեռու, մյուսն ավելի մոտ։ Մյուների վերջավորություններից աչքի մեջ ընկնող ճառագայթներն անկյուններ են կազմում։ Մոտիկ սյունից առաջացող անկյունն ավելի մեծ ե, քան հեռու սյունից դոյցածը։

Կամ նայեցնք այս զգբի առաջին եջը։ Վերնազրի տառերը խոշոր են, իսկ բնազրինը մանր։ Վերնազրի տառերից (զլխատառերից) յեկող ճառագայթները կազմում են ավելի մեծ անկյուն, իսկ բնազրի տառերից յեկողներն—ավելի փոքր անկյուն։

Վորպեսզի հեռավոր սյունն ավելի մոտ յերեա կամ փոքր առարկան ավելի մեծ, հարկավոր և ճառագայթներից դոյացող անկյունը մեծացնել:

Դալիլերը դատի այդ անկյունը մեծացնելու հնարը՝ ողտը վելով ապակիների մեջ լույսի ճառագայթների բեկվելուց: Դալիլերը խողովակում (դիտակում) յերկու ապակի կա—մեկն ուռուցիկ և մյուսը զողավոր: Այդ խողովակն այնքան ել շատ չեր մեծացնում իրը:



Նկ. 1


Այդ գյուտն անելուց յերկու տարի անց—1611 թվականին— այդ ժամանակի մի ուրիշ դիտնական—Կեպլերը—այլ կառուցվածք ունեցող մի խողովակ հնարեց: Դա շատ ավելի յեր մեծացնում, քան Դալիլերինը, և բոլոր դիտնականներն սկսեցին ոգտվել հենց այդպիսի խողովակից:

Կեպլերի խողովակումն ել յերկու ապակի կա, միայն թե զրանք յերկուսն ել ուսուցիկ են: Տեսնենք, ինչպես են զործում այդ ապակիները կամ՝ ինչպես անվանում են՝ այդ լինզերը (տեսապակիները):

Մութ սենյակում սեղանին դնենք մի վառած մոմ: Մոմից վարու հեռավորության վրա տեղափորենք լինզը: Այդ ժամանակ լինզի հետեւմ զրված ձերմակ ստվարաթղթի կտորի վրա մի լուսավոր յերկարագուն բիծ յերեան կզա: Թեթևակի մոմը փչեցեք—բոցը կտատանի, բիծը նույնպես: Բայց ապա մի լինզը քիչ մոտեցրեք ստվարաթղթին—կտեսնեք, վոր բիծն ավելի ցայտուն դարձավ: Դա մոմի պատկերն ե, միայն թե բոցի կողմը զլլիվայր դաբճած: Դա կոչվում է իրական պատկեր (նկար 2):

Իրական պատկերի՝ լինզից ունեցած հեռավորությունը կոչվում է կիրակետային հեռավորություն: Առանց լինզին ձեռք տալու՝ մոմը մոտեցնենք ապակուն—պատկերը կաղոտանա: Վորպեսզի վորոշակի դաբճնենք այն, պետք ե ստվարաթուղթը հեռացնենք.


կտեսնենք, վոր կիզակետային հեռավորությունն ավելի յէ յերկարել: Մոմը լինգից հեռացնենք — հարկ կլինի ստվարաթուղթը մոտեցնել ապակուն: կտեսնենք, վոր կիզակետային հեռավորությունը կարճացավ:



նկ. 2

Ստվարաթղթի վրայի մոմը միանգաւմայն նման և խկականին, բայց ստվարաթուղթը դրանից չի վառվում: Իսկ ապա մի լինզը դրեք ստվարաթղթի և արմի միջև: Ստվարաթղթի վրա լուսավոր բիծ յերեան կզա, ինչպես վոր եր մոմի դեպքում: Լինզն ստվարաթղթին մատեցնենք այնպես, վոր բիծը փայլուն կետ դառնա: Ապա միքիչ այդպես պահեցեք, կտեսնեք, վոր բառարաթուղթը վառվեց: Այդ կետն արեգակի պատկերն ե: Արեք մոմից շատ-շատ անգամ ավելի պայծառ ե: մոմի ճառագայթներից թուղթը չեր վառվում, բայց լինզի ժողոված արեգակնային ճառագայթները վառեցին թուղթը: Լինզից մինչև փայլուն կետը — արմի պատկերը — յեղած տարածությունը կոչվում է զլիսավոր կիզակետային հեռավորություն: Նույն հեռավորության վրա կոտացվի լուսնի պատկերը, ասաղերինը, բոլոր խիստ հեռու առարկաներինը: Դլիսավոր կիզակետային հեռավորության յերկարությունը հեշտ և չափել քանոնով (նկ. 3):


Առարկան վորքան մոտ լինի զլիսավոր կիզակետայից, այնքան ավելի մեծ կլինի նրա պատկերը լինզի հետեւում:



նկ. 3

Լինզի զլիսավոր կիզակետի մոտ զետեղված մի շատ վորքիկ առարկայից խիստ խոշորացված իրական պատկեր կոտացվի:

Սուրբկան ավելի մոտեցրեք զլիսավոր կիզակետին, և պատկերը կչքանա: Հիմա մտիկ տվեք լինզի միջով և դուք կտեսնեք առարկան խոշորացած տեսքով (նկ. 4): Միայն բե լինզի միջով յերբեք արեվին չնայեք. սարափելի ուժ ունեցող նառագայրներն անմիջապես կուրացնեն:




Նկ. 4

Լինզերի կիզակետային հեռավորությունները առարկեր են լինում. քիչ ուսուցիկ ապակունք յերկար է, իսկ շատ ուսուցիկ ապակունք կարճ:

Կեպլերի խողովակը կամ հեռագիտակն այսպես է գործում. առաջին լինզը, վոր կիզակետային յերկար հեռավորություն ունեցող մի որյեկտիվ (դիտապակի) է, տալիս է հեռացված առարկայի փոքրիկ, գլխիվայր իրական պատկերը (նկ. 5) ճիշտ այսպես, ինչպես մոմի պատկերը մութ սենյակում: Այդ «իրական» պատկերը զիտում են խոշորացնող լինզի միջով, վորը խիստ կարճ կիզակետային հեռավորություն ունի: Յերկուրդ լինզը կոչվում է ոկուլյար (ակնապակի):

ԱՐԵԿՈՒՐԴ



Նկ. 5

Խողովակն ուղղենք մի հեռավոր ծառի: Խողովակում որյեկտիվիվը կտա ծառի պատկերը զլիսիվայր: Յեթև ծառին նայելու լինենք սոսկ աչքով, ծառը կտեսնելինք այն անկյան տակ, վոր զծված և առ աղեղով: Ոկուլյարի միջով ծառը տեսնում ենք եթև աղեղով զծված անկյան տակ: Տեսողության անկյունը մեծացավ, և ծառն սկսեց մոտիկ թվալ:

Խոշորանալու պատճառը կարելի յե այսպես ել բացատրել:

Յերեակայեցեք, վոր ծառի փոքրիկ պատկերին մի մարդ նայում է որյեկտիվի միջից, մի ուրիշն ոկուլարի միջից: Պատկերը վնրուեղից ավելի մեծ կթվա:—Իհարկե՝ ոկուլարից: Իսկ քանի անգամ մեծ կթվա:—Այնքան անգամ, վորքան անգամ ոկուլարն ավելի մոտ է պատկերին, քան որյեկտիվը, կամ՝ վորքան անգամ ոկուլարի կիզակետային հեռավորությունը կարճ է որյեկտիվի կիզակետային հեռավորությունից: Յեթե որյեկտիվի կիզակետային հեռավորությունը 100 սանտիմետր է, իսկ ոկուլարինը չ ամ, գիտակը կխոցորացնի 50 անգամ:

Վորաբեզի մեծ խոշորացում ստանանք, պետք եւ վերցնել մեծ որյեկտիվ կիզակետային յերկար հեռավորությամբ:

Աշխարհում ամենամեծ որյեկտիվ ունեցող գիտակը գտնվում է Ամերիկայում Չիկագո քաղաքի մոտի գիտաբանում: Այդ գիտակի որյեկտիվի արամագիծը 100 սմ է: Մեզ մոտ Պուլկովի գիտաբանում մի դիտակ ունի 76 սմ որյեկտիվ և 13 մետր կիզակետային հեռավորություն: Վերջին յերեսուն տարում վոչվոք նույնիսկ չի փորձել ավելի մեծ որյեկտիվ շինել, այնքան գძվար խնդիր ե զա:


Ամենամեծ հեռազիտակները կարող ելին մինչև 6.000 անգամ խոշորացում տալ բայց գործնականորեն յերեք չեն սպավում ավելի մեծ խոշորացումից, քան 300—500 անգամ:

Բայց ինչնու լուսնին չնայել 6.000 անգամ խոշորացումով: Վորքան հետաքրքիր բան կարելի յեր տեսնել այնուեղ: Բանից դուքս ե գալիս, վոր չի կարելի. խանգարում ե ողլ: Ամենամանրիկ փոշիները 6000 անգամ խոշորացնելուց բոլորսին պղտում են զիտակի միջի պատկերը, իսկ ջերմ ողի կոհակները շտատանում» են պատկերը:

100—200 անգամ խոշորացնելուց փոշին ամենեին չի խանգարում, և պատկերը պարզորոշ ե ստացվում: Ահա ե՛ դուքս ե զալիս, վոր պակաս խոշորացնելով կարելի յե ավելի տեսնել:

Մեծ խոշորացումների համար կան ե՛ այլ խոչընդուներ: Դուք գիտակով նայում եք, և հանկարծ պատկերը դեն ե ցատկում, կասես սարսափելի յերկրաշարժ պատահեց: Մի զարմանաք. դա մոտիկ տեղով մի ապրանքատար ավտո սլացավ: Հողի՝ մեզ համար անհականի յերերումը դիտակի համար կատարյալ յերկրաշարժ ե. ուստի գիտաբանները կառուցում են քաղաքներից և յերկաթուղիներից հեռու, իսկ մեծ հեռազիտակներն ամբացնում են ամուր, քարե հիմքերի վրա:

Յերկրի մակերևույթի հեռավոր առարկաներն, որինակ՝ ծովում հեռու գտնվող նավը, զիտում են ընդամենը 10—15 անգամ խոշորացնող զիտակներով։ Տելսկոպը (հեռադիտակն) այդ նպատակի համար անհարմար է. նայում ես մարզուն, տեսնում ես՝ զլիիվայրե ման գալիս։ Բայց այդ պակասությունն ուղղելը զիտ հեշտ է, հարկավոր և միայն զիտակի մեջ մի լինգ և գնել։ Դա մի անգամ ես շուռ կտա պատկերը, և մարզը զիտակի մեջ ճիշտ կերևա։ Յերեք ապակու զիրքը ցույց ե արված 6-րդ նկարում։



Նկ. 6

Յեթե վերցնելու լինեք վորմե զիտակ և ուղղեք կուսնին, դուք միայն մի անորոշ լուսավոր բիծ կտեսնեք։ Կարծում եք՝ զիտակը փշացած եւ վոչ, նա միայն «կիզակետի վրա չի զրված»։ Որյեկտիվից պատկերն ստացվել և խողովակում իր տեղը, բայց ոկուլյարը չիշտ չի զրված. պետք եւ ոկուլյարն այնպես գնել, վոր նա ավելի մոտ լինի պատկերին, քան թե նրա զլիավոր կիզակետային հեռավորությունը։ Լուսնի և աստղերի պատկերը զրված կտակում ստացվում են որյեկտիվից միշտ նույն հեռավորության վրա, ուստի հարկ և լինում ոկուլյարը շատ քիչ տեղափոխել։ Բայց այ, զիտակն ուղղեցեք մի մոտիկ առարկայի, որինակ՝ հարեան այցու մի ծառին։ Դիտակում պատկերը կստացվի որյեկտիվից շատ ավելի հետու։ Այն աեսնելու համար հարկավոր և ոկուլյարն որյեկտիվից ավելի հեռացնել։

Ուստի յերկնային զիտակը շինում են մի քանի խողովակներից բազկացած, վորոնք իրար մեջ են մտնում։

Լինեքը վոչ միայն բեկանում են լույսի ճառագայթները, այլև զրանց կազմալուծում են բազադրիչ զույների։ Ուստի զիտակում պատկերների յերերը զունավորված են լինում։ Վորպեսզի այդ չլինի, հարկավոր և ծայրի ճառագայթները բռնել։ Որյեկտիվիվ վրա յեն հացցնում մեջտեղից ծակ մի ստվարաթղթի շրջանակ։ Ծակը պետք է որյեկտիվի արամագծից փոքր լինի։ Այդպիսի շրջանակը կոչվում է ստոծանի (զիտաֆրազմա)։ Դա պատկերները

պարզորոշ և դարձնում, բայց և միենույն ժամանակ թուլացնում
եւ լուսի ուժը խողովակում (դիտակում):

Դիտակը յերկնքին ուղղելով՝ կարելի յեւ տեսնել նրա մի
փոքր մասը միայն: Այդ մասը կլինի դիտակի «աեսագաշտը»:
Վարքան ավելի մեծ խոշորացնում եւ տալիս դիտակը, այնքան ավե-
լի փոքր տեսադաշտ եւ ստացվում:

Ամենապարզ մանրագիտակը (միկրոսկոպը) — խոշորացնոյցը —
բաղկացած եւ սև շրջանակով պատած մեկ լինզից (նկ. 7): Կան
և բարդ խոշորացնոյցներ, զրանք բաղկացած են մետաղի փոքր
խողովակում գրված յերկու ապակուց, տուփով (նկ. 8): Յերկա-
պակյա խոշորացնոյցը գործում եւ միապակյայի նման՝ շատ կարճ
կիզակետային հեռավորությամբ:




նկ. 7

նկ. 8

Խոշորացնոյցն այնքան ել մեծ խոշորացնում չի տալիս, իսկ
մանրագիտակը սասակի ուժեղ եւ խոշորացնում: Նրա միջով կա-
րելի յեւ տեսնել այնպիսի առարկաներ, վորոնք սոսկ աչքով
բոլորովին չեն տեսնվում:

Մանրագիտակն ել եւ բաղկացած յերկու ապակուց, բայց
զրանք այլ կերպ են գրված: Առաջին ապակին ոբյեկտիվ եւ:
Դիտվող առարկան զրվում է որյեկտիվի գլխավոր կիզակետից
շատ քիչ հեռու: Որյեկտիվից ստացվում եւ դիտվող առարկայի
խիստ խոշորացված պատկերը: Այդ պատկերը դիտում են մյուս
խոշորացնող ապակու — ոկուլյարի միջով: Առարկան կերեա ել
ավելի խոշորացված տեսքով (նկ. 9):



նկ. 9

Ուժդին խոշորացումների գնապքում առարկան պհաք է լայլ
լուսավորված լինի. առանց գրան նա պարզ չի յերևա: Առար-
կան լուսավորելու համար նրա վրա յեն աւղղում արել լույսը
փոքրիկ հայելու միջոցով:

50—60 անգամ խոշորացնող հեռադիտակ յուրաքանչյուրը կարող է ինքը շինել: Հարկավոր և միայն որյեկտիվ և ոկուլյար ձեռք բերել:

Ակնոցի կլոր ապակին կարող է ծառայել իրեւ հրանալի որյեկտիվ: Ճիշտ և փոքր և այն և շատ լույս չի հավաքի, բայց դրա փոխարեն ակնոցի ապակին սովորաբար շատ բարակ և և նրանում լույսի կորուստը մեծ չի: Դա որյեկտիվի համար առավելություն է:

Ակնոցի ապակի կարելի յի ճարել ամեն մի ոպտիկական խանութում: Միայն թե կլոր պետք է լինի այն, վոչ թե ձվածե ձվածե ապակին փոքրիկ առարկաների ճշգրիտ պատկերը չի տա:


Ոպտիկական խանութներում ակնոցի ապակիները տարրեր գումար են վոչ թե կիզակետային հեռավորությամբ, այլ «դիոպտրիաներով»: Վարքան մեծ և դիօպտրիան, այնքան կարճ և կիզակետային հեռավորությունը: 1 դիօպտրիանոց ապակու կիզակետային տարածությունը 100 սմ և 4 դիօպտրիանոց ապակու կիզակետային հեռավորությունը 25 սմ և:

Իսկ քանի դիօպտրիա պետք է ունենա մեր որյեկտիվը: Խմանալը հիշտ է: 100-ը բաժանեցեք կիզակետային հեռավորության վրա—կստանաք դիօպտրիաների թիվը: 100 : 75 = 1, 3 դիօպտրիայի: Ոպտիկական խանութում այսպես ել հարցըքը. ակնոցի կլոր ապակի 1, 3 դիօպտրիանոց:

Ոկուլյարի համար ամենից լավ և վերցնել պատրաստի բարդ խոշորացույց: Դա փոխարենում է շատ կարճ կիզակետային հեռավորություն ունեցող մի ապակուն: Դա ել կարելի յի գոնել ոպտիկական խանութում: Յեթե բարդ խոշորացույց չլինի, պետք է ձեռք բերել 1, 5 սմ կիզակետային հեռավորություն ունեցող մի փոքրիկ ապակի:

Որյեկտիվը խողովակի (դիտակի) մեջ դնելը շատ հասարակ բան է: Պետք և վերցնել մոտավորապես 7, 5 սմ արամագիծ և 10—15 սմ յերկարություն ունեցող մի կլոր սովորաթղթի տուփ առանց կափարիչի: Այդպիսի տուփերով սուրճ ու կական յեն վաճառում: Տուփի հատակի կենտրոնում բաց արեք մի կլոր

ծակ, վորը մի քիչ ավելի փոքր տրամադիծ ունենա, քան որյեկտիվի ապակին: Տուփի հատակի նման տրամագիծ ունեցող մի շրջանակ կարեցեք ստվարաթղթից: Շրջանակի մեջ տեղը նույնապես կլոր ծակ բաց արեք ճիշտ որյեկտիվի ապակու տրամագիծի համեմատ: Կստացվի տափողակ (շայրա): Դա պետք է զնել և կպցնել զրախց տուփի հատակին այնպես, վոր հատակի ծակի կենտրոնը տափողակի ծակի ուղիղ կենտրոնի վրա գտ: Կստացվի մի խորություն (խոռոչ), վորի մեջ շատ հարմար կերպով դրվում և որյեկտիվը (նկ. 10):



Նկ. 10

Որյեկտիվի և տափողակի վրայից տուփի հատակին կը պարեք բարակ ստվարաթղթեն մի տափողակ ևս: Այդ տափողակի ծակի տրամագիծը պետք է հավասար լինի տուփի հատակի ծակի տրամագիծն: Խողովակի ծայրին կպցըք շուրջանակի բարակ ստվարաթղթեն մի շերտիկ (նկ. 11):




Նկ. 11

Խողովակի իրանի համար վերցըք բարակ ստվարաթղթուղթ կամ գծագրություն թուղթ: Դրանով փաթթեցեք որյեկտիվ ստրունակող տուփը (նկ. 12), և խողովակի կստացվի: Խողովակի յերշակակետային հեռավորությանը: Յեթե որյեկտիվի կիզակետային հեռավորությունը 75 սմ է, նշանակում են խողովակին ել նույնպիսի յերկարություն ունեցող պիտի լինի: Միայն չմոռանաք խողովակը ներսից ներկել ուն ներկով կամ տուշով, թե չե պատճերից արտացոլող լույսը կփչացնի պատկերը: Գնովի խոշորացույցը (ոկուլյարի համար) ծխնիով (շաբանի բով) միացած է մետաղե պատյանի (ֆուտյարի) հետ (նկ. 8): Պատյանը հարկավոր չե, սղոցավ կարեցեք, Դա հեշտ է կատարել

Նկ. 12

նրբասպոցով: Կմնա յերկու ապակի ունեցող մի կարճլիկ խողովակ: Դա պետք է դնել 10-15 սմ յերկարություն ունեցող տուփի հատակում: Այդ տուփը պետք է նույնպիսի տրամադիծ ունենա, ինչպիսին և՛ ոբյեկտիվի համար վերցրածը: Դա պետք է մանի խողովակի մեջ:

Խոշորացույցը տուփի հատակում գնելու համար ստվարաթղթից մի քանի հատ տափողակ կարեցէք: Տափողակների ծակերը շինեցէք առաջարացույցի արտաքին տրամադիծի համեմատ: Տուփի հատակը ծակեցէք խոշորացույցի ապակիների տրամադիծի համեմատ: Տափողակները կպցըք տուփի հատակին: Հիմա հեշտ է խոշորացույցը տեղը գնել (նկ. 13) և սոսնձով կպցնել այն: Դիտակը պատրաստ է:




Նկ. 13

Դա 50-60 անգամ կխոշորացնի: Դա ձեռքում բռնած անկարելի յերեկինքը զիտել: Այդպիսի խոշորացման դեպքում ձեռների ամենափոքր դուրսցը պատակերին ցատկել և տալիս տեսազարդը: Ուստի զիտակը պետք է դնել շատափիվ (նեցուկի) վրա: Դա այսպիս կարելի յե անել: 50-60 սմ յերկարություն ունեցող փայտե նեղլիկ քանոնի լայնությամբ պետք է մի կլոր առանցք ամրացնել: Խողովակի (զիտակի) իրանը սոսնձով կպցնում են այդ քանոնի նորին: Ավելի զիմացկուն լինելու համար խողովակի և քանոնի ծայրերին կտորեղին կպցըք (նկ. 14):


Սոսնցըքը պետք է խողովակի յերկու կողմից 3-4 սմ դուրս գա:

Խողովակը վեր ու վայր կպտավի այդ հորիզոնական առանցքի շուրջը: Բայց դրա հետ միասին նա պետք է ամեն մի դիրքում կանգնի ել: Դա ևս գծվար բան չէ:



Նկ. 14

Յաներայից (դրվագաթերթից) յերկու շրջանակ կտրեցեք սղոցով՝ յուրաքանչյուրը 15 սմ արամագծավ: Դրանք սասնձավ կպցրեք յեռանկյունի ձեւ ունեցող մի փայտի կտորի (նկ. 15):



Նկ. 15

Պովակի միջով նայելը հարմար լինի:

Չողիկի ստորին ծայրին մեխեցեք մի խաչմերուկ. վերին


պետք և դնել 10-15 սմ յերկարություն ունեցող մի կարճ սղոցաձիկ առանցքի վրա: Դիտակը (խողովակը) այդ առանցքի շուրջը կպտավի աջ ու ձախ: Յեռանկյունու հաստությունը պետք և այնպես լինի, վոր խողովակի իրանը թեթև շփումով պտտավի ֆաներային շրջանակների միջև: Շրջանակներին շփուլը խողովակը կպահի ուղած դիրքում: Շտատիվի համար վերցրեք 15-20 սմ հաստություն ունեցող մի փայտի կտոր: Այնպիսի յերկարությամբ փայտ ընտրեցեք, վոր շատատիվը սղուանին դրված ժամանակ խո-

ծայրին ամբացըք մի կարճ, կլոր խողովակ կամ թիթեղեւ պահունակ: Պահունակը ցույց է տրված 16-րդ նկարում:

Դիտակի ուղղաձիգ առանցքը զրվում է պահունակի մեջ: Այժմ կարող եք այն հեշտությամբ դարձնել (պատել) հորիզոնական և ուղղաձիգ առանցքների շուրջը: Դա բավական է դիտակը յերկնաքի ուղած կետին ուղղելու համար (նկ. 17):

50 անգամ խոշորացնող խողովակը (դիտակը) կարելի յե ձեռքով դեկավարել: Ավելի մեծացնող դիտակը դեկավարելն այնքան ել հեշտ բան չէ: Դրա համար հարկավոր հարմարանքներ դժվար կլինի շինել ամեն միկին անձամբ:

Յերբ դիտակ կպատրաստեք, աշխատեցնք, վոր որյեկտիվի և սկուլյարի կենարոններն ընկնեն ճիշտ մի ուղիղ գծի վրա: Յեթե պատկերների յեզրելը պարզ չլինեն, պետք է որյեկտիվի վրա դիաֆրագմա (ստոծանի) քաշել: Դիաֆրագման կարում շինուամ են բարակ ստվարաթղթից կլոր ծակով, վորն ամելի փոքր և լինում, քան դիտակի (խողովակի) ծակը: Դիաֆրագման հազար նում են կափարիչի պիս (դրսից) որյեկտիվը պարունակող խողովակի ծայրին:



Շինեցեք մի քանի կափարիչ դիաֆրագմաներ դանապան ծակերով: Այն ժամանակ կարող եք ընարել այնպիսի դիաֆրագմա, վորով և լավ և յերեսում, և պավագումներն աննշան են:

Նույնպես հեշտ ե շինել նաև յերկրային դիտակ: Յերկրային դիտակի որյեկտիվի համար ճարեցեք 15 սմ կիզակետային հեռավորություն ունեցող մի կլոր ակնցային ապակի: Այդպիսի ապակին ունի

Նկ. 16

100 : 15 = 6, 7 դիոպտրիա: Խանություն պահնչեցեք 6-7 դիոպտրիանոց ապակի: Ոկուլյարի համար վեցըք 1, 5 սմ կիզակետային հեռավորություն ունեցող ուսուցիչ ապակի կամ այնպիսի բարդ խոշորացույց, ինչպիսին և հեռադիտակի: Այդպիսի ապակին ունի

Որյեկտիվը պարունակող ստվարաթղթի խողովակը 40 սմ յերկրությամբ պատրաստեցնեք:

Դիտակում պատկերը շատ տարու համար պետք է որյեկտիվի և սկուլյարի արանքում մի ապակի ևս զետեղել: Ճարեցեք շատ կարճ, որինակ՝ 5-6 սմ (15-20 դիոպտրիանոց) կիզակետային

հեռավորություն ունեցող ակնոցային ապակի: Որյեկտիվը դիտակում «իբական» պատկերն եւ տալիս: Յերկրորդ լինզը կրկնում է այն եւ շուրջ եւ տալիս (նկ. 6): Ոկուլյարում պատկերը դիտում են հավելյալ լինզից:

Հավելյալ լինզը և ոկուլյարը զրեք կարճ խողովակի ծայրերում: Խողովակի յերկարությունը մոտավորապես հավասար է հավելյալ լինզի կրկնակի կիզակետային հեռավորությանը պլանու ոկուլյարի կիզակետային հեռավորության յերկու յերրորդը: Հավելյալ լինզի 5 սմ կիզակետային հեռավորության և ոկուլյարի 1, 2 սմ կիզակետային հեռավորության զեսքում խողովակի յերկարությունն սատացվում է $5 \times 2 + 1 = 11$ սմ: Հավելյալ լինզի և ոկուլյարի միջև տարածությունը մնում է անփոփոխ: Ավելի ճշգրիտ՝ նա այսպես եւ լինում: Բաց զիրքը զրեք հավելյալ լինզից կրկնակի կիզակետային հեռավորության վրա: Դիտակով ոկուլյարի միջով նայեցեք զրքին: Այժմ դիտակը զործում է ինչպես սովորական հեռադիտակ: Յեթե տառերը պարզ են յերեւում, ապա ոկուլյարը տեղն եւ: Յեթե վոչ՝ ուրեմն տպանց հավելյալ լինզը տեղից շարժելու՝ ոկուլյարը քիչ մոտեցրեք նրան կամ հեռացրեք նրանից, մինչև վոր տառերը պարզ յերեւան:

Այդ զրության մեջ ոկուլյարն ամբացցրեք:

Հավելյալ լինզը և ոկուլյարը պարունակող խողովակը մըտցնում են դիտակի մարմնի մեջ:


Յերկրային առարկաների պատկերները խողովակում (դիտակում) կսատացվին որյեկտիվից զանազան տարածության վրա: Առարկան վորքան մոտ եւ, այնքան հեռու կլինի պատկերը դիտակում:

Դիտակն ուղղելով հեռավոր առարկայի (որինակ՝ ծառի, նաև վի) վրա՝ աստիճանաբար զուրու քաշեցեք ոկուլյարը պարունակող ներքին խողովակն այնքան, մինչև վոր հեռավոր առարկան պարզ յերեւա:

Դիտակի ողնությամբ շատ կարևոր զյուտեր են արվել: Գալիլեյը շատ շուտով նկատեց կումի վրայի լեռները և տեսակ լուսութաղ (Յուպիտեր) մոլորակի չորս արբանյակները:

Դիտակը ցույց տվավ «թափառող աստղերի»—ինչպես առաջներում անվանում ելին մոլորակները—և «անշարժ» աստղերի միջև յեղած տարրերությունը: Դիտակում «թափառող աստղերը» (մոլորակները) յերեւում են շրջանակների ձևով: «Անշարժ» աստղերը

~~A 1642~~
A 19760




b. 17



Նույնիսկ ամենառուժեղ դիտակում շրջան չեն տալիս, այլ միայն ավելի պայծառ են դառնում:

Ենքնագործ հեռադիտակով աստղերը դիտելու համար պետք է մի հանգիստ տեղ ընտրել բակում կամ այգում, փոշոս ճանապարհներից և ելեկտրական լապտերներից հեռու. լապտերների լույսը թուլացնում է խոզովակում պատկերի անսանելիությունը: Հեռադիտակով նայում են սովորաբար մեկ աչքով, իսկ մյուսը կկոցում են: Յերկար զիտողությունների գեպքում այզպիսի յեղանակը շատ և հոգնեցնում: Պետք է սովորել նայել դիտակով



Ն. 18

սպանց մյուս աչքը վիճելու: Միենայն ժամանակ պետք է ուշադրությունը կենտրոնացված լինի միայն դիտակի միջնապատկերի վրա: Այսպիսի յեղանակը չի հոգնեցնում և թույլատրում է յերկար նայել դիտակով: Այդպիս ել անում են խվական աստղադիտարաններում:


Փոքր դիտակով ամենահետաքրքիր բանն ե նայել լուսնին: 50-60 անգամ խոշորացման գեպքում լուսնային մակերեսութիւնը յուսավորված յեղբում յերեսում են ողակաձև լեռներ: Լեռ-

Նային ողակների ներսում յերեսում և թույլ ձիթապտղի գույնով ներկված տափակ ճարթությունն Յերկրի վրա այդպիսի սարեր չկան: Բացի ողակաձև լեռներից Լուսնի վրա յերեսում են պայծառ կետեր և կետերի շղթաներ. դրանցից սև ստվերներ են ընկնում: Դրանք սովորական լեռներ են, վոր մենք ճանաչում ենք նաև Յերկրի վրա: 18-րդ նկարում Լուսնի մակերեսույթը պատկերացված է այնպես, ինչպես այդ յերեսում և ինքնազործ դիտակով:

Լուսնին նայելը հարմար է Լուսնի լրտեմից առաջ և հետո: Երման ժամանակ ստվերներ չկան, և լեռները վատ են յերեսում:

Լուսինը զանդաղ շարժվում է յերկնքով և ամբողջ ժամանակ հեռանում դիտակի տեսազարդից: Ուստի հարկ և լինում դիտակը քիչ-քիչ պատել:

Սակայն մի քանի ըստեն իրար հետեւից կարելի յէ նայել առանց դիտակին ձեռք տալու: Այդ ժամանակը կարելի յէ ողտագործել լուսնային լեռները նկարելու համար:



Նկ. 19

Այսպիսի ամպեր, ինչպես Յերկրի վրա յին լինում, Լուսնի վրա չկան: Եշանակում ե՞ւ այնտեղ վոչ ոդ կա, վոչ ել ջուր: Լուսնի վրայի մութ բծերը յերբեմն անվանում են «ծովեր», բայց դրանք անջուր ծովեր են:


Ինքնազործ դիտակով մյուս մոլորակներից կարելի յէ դիտել Արուսյակը (Վեներան) և Լուսնթազը (Յուլպիտերը):

Արուսյակ մոլորակը յերեսում և արևմուտքում՝ արեգակը
ժայր մանելուց անմիջապես և արևելքում՝ արեածագից առաջ:
Դրան կոչում են յերեկոյան և առաջոտյան աստղ: Շատ պայծառ
և արև և նույնիսկ կարող ե Յերկրի վրայի առարկաներից ըստ-
վեր տալ:

Դիտակն ուղղելով՝ Արուսյակին՝ կարելի յե տեսնել մի կի-
առաշըան կամ մանգաղ, միանգամայն ինչպես փոքրիկ լուսին:

Յերկնքում հեշտ և գանել նաև լուսնթագ մոլորակը: Նա
թվում ե շատ պայծառ, չթարթող (չդողլողացող) աստղ, Արուսյա-
կից հետո ամբողջ յերկնքում ամենապայծառը:

Ինքնազործ դիտակով կարելի յե տեսնել լուսնթագ մոլո-
րակի շրջանակը, իսկ նրա կողքերին չորս փոքրիկ աստղեր:
Միևնույն դժի վրա շարված աստղիկները լուսնթագի արբանյակ-



Նկ. 20

Ներն են, վոր Գալիլեյն և դաեւ, Նրանք, պատովում են Յուպիտերի
շուրջը, ինչպես լուսինը Յերկրի շուրջը:

Այդ մոլորակը մի քանի որ իրար հետեւից դիտելով՝ նկա-
տում ենք, վոր լուսնթագի արբանյակները փոփոխում են իրենց
դիրքը. Նրանք կամ ավելի մոտ են լինում լուսնթագից, կամ
ավելի հեռու, կամ բոլորովին թաղնվում են նրա հետեւմ:

Այդ մոլորակի վրա շերտեր են յերեսում: Դրանք ամպեր են մոլորակի միջնորատում: Մոլորակի իսկական մակերևույթն ամպերի խիտ շերտի հետեւում թագնված լինելով՝ մեղ չի յերեսում (Ակ. 19):

Յերկնքին մի փոքր ծանոթանալով՝ կարելի յե զանել Հրատա (Մարս) և Յերեակ (Սատուրն) մոլորակները: Հրատա փայլում է չթարթող կարմիր լույսով և յերկնքում հեշտությամբ է գտնվում:

50—60 անգամ խոշորացնող խողովակով Յերեակը ձգված է թվում: Դա առաջանուում է նրանից, վոր մոլորակը շրջապատված է փայլուն ողակով:

Նույնպիսի խոշորացումով Արեի վրա կարելի յե տեսնել այսպիս կոչվող շարեգակնային բժերը: Բայց հիշեցեք, վոր Արեին կարելի յե նայել միայն հատուկ մքնացրած կամ մքատած ապակիներով. առանց մքնացրած ապակու Արեին մի անգամ նայելուց մասդի վայրկենապես կուրտնում է:


Արեգակնային բժերը պատկերացված են 20-րդ նկարում:

Յեթե զիտակն ուզզենք ասազերի թույլ փայլով մի խմբի կամ ծիրակաթինի ճերմակավուն մասերին, տեսազաշտում աստղերի մի բաղմություն և յերեան գալիս: Սոսկ աչքով այդ աստղերը չեն յերեսում. դրանք խիստ թույլ լույս են արձակում: Միայն զիտակն և նրանց տեսանելի դարձնում: Մի քանի աստղեր կրկնակի յեն թվում: Այդպիսի աստղ զանվում ե՝ որինակ՝ Մեծ Արջ համաստեղության պոչում:

Այդպիս ընդարձակում և տեսանելի աշխարհի սահմանները մի փոքրիկ զիտակ, վորը շատ հեշտ և սեփական ձեռքով շինել:

Դժվար չեն նաև ձեռքով մանրադիտակ շինելը:

Գնեցեք մի բարդ խոշորացույց, խոշորացույցի պատյանը նըրասղոցով կարեցեք: Խոշորացույցի խողովակում՝ յերկու ապակի կա: Մի ապակին հեշտ և հաճախ. խողովակի ներսում գրան պահում ե մի լարե ողակ: Գրչահատ դանակով ողակը վոր հանեք, ապակին և լընկնի: Դա կլինի մանրադիտակի որյեկտիվ: Մյուս ապակին կմնա խողովակում: Դա կլինի մանրադիտակի ոկուլարը (նկ. 21):



Նկ. 21

Որյեկտիվն ու ոկուլարը պետք ե դնել խողովակի մեջ: Խողովակը պետք ե շարժվի, վորպեսզի կարելի լինի ոկուլարը մոտեցնել և հեռացնել որյեկտիվից: Դա կարելի յե շինել չմիշտ այնպես, ինչպես և՛ հեռադիտակ պատրաստելու: Վերցրեք 2, 5—3 սմ արամագիծ ունեցող մի կլոր ստվարաթղթե տուփիկ: Այդ տուփի հատակի մեջ տեղը բաց արեք մի ծակ ավելի փոքր արամագծով, քան որյեկտիվի համար զործազրվող լինզը: Յերկույին բեր ստվարաթղթե շրջանակներ շինեցեք որյեկտիվի արամագծի համեմատ և կպցըք տուփի հատակին: Կստացվի մի խորություն,

ուր հարմար զետեղվում և որյիկախվը: Վարպեսդի չընկնի այն,
վրայից կպցրեք մի շրջանակ ևս մեջ տեղն ափելի փոքր ծակ,
քան որյեկտիվի տրամագիծը (նկ. 10 և 11): Այդպիսի մի ուրիշ
տուփիկի հատակում կլոր ծակ բաց արեք լինդի տրամագիծի հա-
մեմատ: Ստվարաթղթից շինեցեք մի քանի շրջանակներ մեջ տեղը
խոշորացույցի պահունակի տրամագիծի համեմատ ծակերով և զը-
րանք կպցրեք տուփի հատակին: Կստացվի մի խորություն, ուր
հեշտ կլինի ոկուլյար դնելը (նկ. 13):

Այժմ պետք և վորոշել որյեկտիվի հեռավորությունն ոկու-
լյարից: Վերցրեք մի նեղ քանոն և թելով ամրացրեք նրան որյեկ-
տիվը պարունակող տուփը: Գլխավոր կիզակետից շատ քիչ հեռու
քանոնի վրա մի զնդասեղ խրեցեք: Հիմա մատիկ արեք սկուլյարի
միջով՝ հետդհետե շարժելով այն դեպի որյեկտիվը (նկ. 22):




Նկ. 22

Յերբ տեսադաշտում պարզ կերևա խոշորացված զնդասեղը, քա-
նոնից կորոշեք մանրադիտակի իրանի յերկարությունը:

Իրանն այսպես շինեցեք: Որյեկտիվը պարունակող խողո-
վակը պատեցեք բարակ ստվարաթղթով և կպցրեք ամրող յեր-
կարությամբ: Դիտակ կստացվի: Ներսը ներկեցեք սև ներկով կամ
սուշով:

Իրանի յերկարությունն արգեն փորոշվել և քանոնով: Իրա-
նի մյուս ծայրը հրեցեք ոկուլյարը պարունակող խողովակը:
Մանրադիտակի իրանը պատրաստ և Պետք և այն դնել շտատիվի
(նեցուկի) վրա: Դիտվող առարկաների համար պետք և մի փոքր
սեղան շինել: Մանրադիտակի իրանը, փոքրիկ սեղանը և մի փոքր
հայելի, վորը գործազրվում և դիտվող առարկան լուսավորելու
համար, ամրացնենք մի քանոնի վրա: Փոքրիկ սեղանը մի քառա-
կուսի տախտակ և մեջ տեղը փոս արած, փորեկ զնում են ապա-
կի զնոնդ առարկայի հետ միասին: Ֆաներայից շինած յերկու
անկյունարգսվ, վորոնք կցված են սեղանի կողերին և քանոնին,
սեղանն ամրացվում և (նկ. 23):


Փոքրիկ հայելին ամբացվում և սեղանի տակ նբանից 5-6 սմ հեռավորության վրա: Նա պետք է պատվի հորիզոնական առանցքի շուրջը, վորպեսզի լույսն ուղղվի դիտվող առարկայի վրա: Դա կարելի յէ այսպես անել, մանրագիտակի սեղանի տակ կըպցը մի շրջանակի: Շրջանակի ներսում հորիզոնական առանցքի վրա կպտավի փոքրիկ հայելին: Հայելին առանցքին են կպցնում մի կտոր շորով, վորին սսխնձ և քաված: Առանցքի ծայրերն անցնում են շրջանակի կողի պատերի միջով (նկ. 24):



նկ. 23

Մանրագիտակի իրանը զրեք քանոնի վրա և բոնեցեք այն ստվարաթղթի մի լայն հեցով (սղակապով):


Բանոնը հայելու ենթականի հետ միասին սոսնձեցք շտատիվի վրա շեղ հատվածին (նկ. 25):



նկ. 24



նկ. 25




64. 26

Մանրազիտակի իրանն անշարժ և մոռում քանոնի վրա, բայց չեցը թույլ և տալիս նրան քանոնի յերկարությամբ վեր ու վայր շարժվել (նկ. 26):

Զննվող առարկան կանագական բալասանով կպցնում են ապակուն: Ապակին դնում են սեղանին որյեկտիվի տակ: Ապակին սեղանի վրա պետք և լինի սրյեկտիվի զվարար կիզակետից շատ քիչ հեռու: Հայելին առանցքի շուրջը պտաելով՝ լույսն ուղղեցեք ապակու վրա: Նայեցեք սկուլպարի միջով և թեթեակի ներս տարեք ու գուրս բերեք այն, մինչև վոր առարկան պարզ կերեա:

Կարելի յե փորձել մի քիչ մոտեցնել մանրազիտակի իրանն ապակուն: Դրանով կարելի յե ավելի մեծ խոշորացում ձեռք բերել:

Մանրիկ միջատները, բրդի, բամբակի մազմղուկները կարելի յե զիտել առանց առանձին պատրաստությունների: Հարկավոր և միայն զրանք կանագական բալասանով կպցնել առարկայի ապակուն և զնել մանրազիտակի տակ:



նկ. 27

Բուսական հյուսվածքների, որինակ՝ փայտի կառուցվածքը տեսնելու համար պետք ե ածելիով կտրել հյուսվածքի մի շատ բարակ շերտ։ Շերտը պետք ե թափանցիկ լինի:

Հյուսվածքի մի փոքրիկ կտրոր կպցնում են առարկայի ապահովություն։ Այդպիսի կտրորը կոչվում ե պրեպարատ (պատրաստուկ)։ Ոգտակար ե լինում պրեպարատը ներկիլ։ Հյուսվածքի կառուցվածքի առանձին մասերն այդ գեղքում ավելի լավ են յերեսում։

Այսպես կարելի յե զննել խնձորի, ձմերուկի, փայտի, զանազան բանջարեղենների հյուսվածքը։

Հյուսվածքները մանրադիտակով զննելով՝ կարելի յե տեսնել այն առանձին բջիջները, վորոնցից նրանք բաղկացած են։ Մանրադիտակով կարելի յե տեսնել բույսերի մազիկները (նկ. 27)։

Մանրադիտակը ջոի կաթիլի մեջ մեր առջե բաց ե անում նույնպիսի մի անսահման աշխարհ, ինչպիսին հեռադիտակն աստղամիջյան տարածություններում։



ՀԵՂԻ ՎԵՐԱԿՐՈՆ ՀԵՂԻ ՎԵՐԱԿՐՈՆ
ՏԵՂԻ ՎԵՐԱԿՐՈՆ ՀԵՂԻ ՎԵՐԱԿՐՈՆ

ՏԵՂԻ ՎԵՐԱԿՐՈՆ ՀԵՂԻ ՎԵՐԱԿՐՈՆ

ՏԵՂԻ ՎԵՐԱԿՐՈՆ ՀԵՂԻ ՎԵՐԱԿՐՈՆ

ՏԵՂԻ ՎԵՐԱԿՐՈՆ ՀԵՂԻ ՎԵՐԱԿՐՈՆ

ՏԵՂԻ ՎԵՐԱԿՐՈՆ ՀԵՂԻ ՎԵՐԱԿՐՈՆ ՀԵՂԻ ՎԵՐԱԿՐՈՆ

ՏԵՂԻ ՎԵՐԱԿՐՈՆ ՀԵՂԻ ՎԵՐԱԿՐՈՆ ՀԵՂԻ ՎԵՐԱԿՐՈՆ

ՏԵՂԻ ՎԵՐԱԿՐՈՆ ՀԵՂԻ ՎԵՐԱԿՐՈՆ ՀԵՂԻ ՎԵՐԱԿՐՈՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	Ոպտիկական ապակիներ	3
2.	Ինքնազործ հեռագիտակ	11
3.	Ինքնազործ մանրագիտակ	22

9260

Պատ. խմբագիր՝ Հ. Սարգսյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան
Սրբագրիչ՝ Ա. Շահբաղյան

Գլուխացի լիադոր Ա—3094 Պատվեր 209
Հրամ. 4533. Տիրաժ 2000.

Թարգմ 62×94 տպ. 13/4 մամ.
Մեկ մամ. 38. 400. նիշ.

Հանձնված և արտադրության 27 փետրվարի 1938 թ.
Սարբագրված և տպագրության 17 մայիսի 1938 թ.

Գետնը 1 տպարան, Ցեղեան, Լենինի 65

Проб. 1940]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0007672

ԳԻՒԸ 1 Ր.

36

ЦЕНА

15760

Ф. БУТНИКОВ
ТЕЛЕСКОП И МИКРОСКОП
ИИЗ АРМ. ССР, ЕРЕВАН